

**«ԿԱՐԵՆ ԴԵՄՈԿՐԱՏՈՒՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԱՆՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՄ-ԳՀԾՁԲ-21/28-1**

ք. Երևան

«12» 04 2021թ.

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ը ի դեմս տնօրենի ժ/պ՝ Գ. Ավետիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է առավելագույնը 4500000 (չորս միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ միավորի համար, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Պատվիրատուն վճարումը կատարում է իրեն փաստացի մատուցած ծառայության դիմաց՝ հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $V_1 = U_1 / (1 + r \cdot x)$, որտեղ՝

V_1 -ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է:

U_1 -ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է:

r -ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է:

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է:

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

*4968000 (չորս միլիոն ինը հարյուր վաթսուներեք հազար) ՀՀ դրամ:

**16080000 (վասնվեց միլիոն ութսուն հազար) ՀՀ դրամ:

4.3 Պատվիրատուն վճարումը կատարում է իրեն փաստացի մատուցած ծառայության դիմաց՝ հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, իսկ մինչև 30.12.2021 թվականը պահանջ չներկայացվելու դեպքում չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տուգանք՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով նախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք

կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի
մետրոպոլիտեն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930000358920100

ՀՎՀՀ 00000911



Պատրիկ Գևորգյան (ստորագրողություն) Գ. Ավետիսյան

ԿԱՏԱՐՈՂ

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց փ. 31.
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510012745550100
ՀՎՀՀ 055465456



տնօրեն Գասպարյան

«19» 04 2017թ. կնքված
 Հավելված N
 ԵՄ-ԳՀՁՁԲ-21/28-1 ծածկագրով պայմանագրի


ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ* - ԳՆՄԱՆ ՔԱՄԱՆԱԿԱԳՐՈՒՅՑ**

2/ի* **	Լարանքի					Մատուցման		
	Միջանցիկ ծածկագիր ը' ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Հատկանիշները (տեխնիկական բնութագիր)	Չափման միավորը	Պայմանագրի առավելագույն գումար (<< դրամ)	Ընդհանուր քանակը	Հասցեն	Ժամկետը
1	50111130	ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություններ	ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություն, որի տեխնիկական բնութագիրը ներկայացվում է ստորև՝ Հավելված 1.1-ում:	դրամ	4500000	1	ՀՀ, ք. Երևան	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Փնտմների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները՝ ըստ Պատվիրատուի պահանջի:

** Ծառայության մատուցման ժամկետը, իսկ փոփոխյալի մատուցման դեպքում՝ առաջին փուլի մատուցման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր. որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կրոմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը. բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը հասնաձայնում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում: Մատուցման վերջածանկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
 ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղդասյան 78
 «Կոնվերս բանկ» ՓԲԸ
 ՀՀ 1930000358920100
 ՀՀ 0744 00000911



ԿԱՏԱՐՈՂ

«Ֆելեշ Մուտրա» ՍՊԸ
 ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց փ. 31.
 «Արարատբանկ» ԲԲԸ
 ՀՀ 1510012745550100
 ՀՀ 055465436



տնօրեն՝ Ա. Ավետիսյան

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄՊԱՄԱՐԿՎԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐԴԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. Կատարողը պետք է ունենա անհրաժեշտ նյութատեխնիկական բազա և մասնագիտական անձնակազմ, այդ թվում՝
 - 1.1 սպասարկման տարածքում ավտոպահեստամասերի պահեստի կամ խանութի առկայություն
 - 1.2 պետք է ունենա վերանորոգման համար անհրաժեշտ բոլոր արտադրամասերը (ընթացամասի, էլեկտրականության, յուղման, անվաբացքի կարգավորման, վոլվանացման, ինժեկտորի վերանորոգման, ղեկային մասի, փոխանցման տուփի և կամրջակների վերանորոգման, ինչպես նաև մեքենայի ամբողջման և այլ անհրաժեշտ սարքավորումներ և ծառայություններ):
2. Պատվիրատուի ավտոմեքենան տեխնիկական սպասարկման կայան ժամանելուց հետո Կատարողը պետք է ապահովի ավտոմեքենայի արտահերթ սպասարկում՝ ժամանելու պահից առավելագույնը 30 (երեսուն) րոպե հետո, որից անմիջապես հետո Կատարողը մեկ ժամկա ընթացքում պետք է ապահովի ավտոմեքենայի ամբողջումը՝ տրամադրելով ավտոմեքենայի վրա իրականացվելիք աշխատանքների, երաշխիքների, դրանց կատարման ժամկետների մասին տեղեկանք (տեղեկանքում ներառվող ծառայությունները պետք է համապատասխանեն պայմանագրի թիվ 1.1 հավելվածով սահմանված ցանկին), ընդ որում աշխատանքների կատարման ավարտի համար նախատեսված առավելագույն ժամկետը չի կարող ավել լինել 2 օրից, բացառությամբ այն դեպքերի, երբ Կատարողը Պատվիրատուին տրամադրում է տեղեկանք-հիմնավորում ծառայությունների մատուցումը 2 (երկու) օր անհնարին լինելու վերաբերյալ, որի մասով Պատվիրատու կողմից սահմանվում է ծառայությունների մատուցման խելամիտ ժամկետ:
3. Ավտոմեքենան տեխնիկական կայան ժամանելուց՝ առավելագույնը 1 (մեկ) ժամ 30 (երեսուն) րոպե հետո, պետք է սկսվի ավտոմեքենայի սպասարկման գործընթացը (ծառայությունների մատուցումը):
4. Կատարողը պետք է կարողանա միաժամանակ սպասարկել մի քանի ավտոմեքենա:
5. Կատարողի կողմից սպասարկումը պետք է իրականացվի աշխատանքային օրերին ժամը 09:00-ից մինչև 18:00-ն ընկած ժամանակահատվածում:
6. Կատարողը պետք է ունենա առնվազն մի քանի ավտոմեքենայի համար նախատեսված կայանման (պահպանման) վայր, թնդ որում ավտոմեքենաների այնտե գտնվելու ամբողջ ընթացքում՝ Կատարողի կողմից պետք է իրականացվի շուրջօրյա (24 ժամ) տեսահսկում և այդ ընթացքում իրականացված տեսաձայնագրություն պետք է պահպանվի առնվազն 30 (երեսուն) օր և պահանջի դեպքում 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվի Պատվիրատուին:
7. Փոխարինված ավտոմասերը պահանջի դեպքում՝ մեկօրյա ժամկետում, պետք է վերադարձվեն Պատվիրատուի ներկայացուցչին:
8. Նորոգման ծառայությունները պետք է իրականացվեն կից ներկայացված ցանկին համապատասխան:
9. Կատարողը պետք է տրամադրի համապատասխան երաշխիքային ժամկետներ, որոնց մասով նվազագույն պահանջները բերված են ստորև (այն ստորև մասով, որոնց համար երաշխիքային ժամկետ հնարավոր չէ սահմանել՝ պետք է ներկայացվի համապատասխան տեղեկանք հիմնավորում):

140	Առջևի լապտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000
141	Հավանաշուշային լապտերի տեղադրում	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000	2000
142	Հետևի լապտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000
143	Առջևի լապտերների կադավորում	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000
144	Բռնվան կողպեքի հանում և տեղադրում	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	2000
145	Վառոցքի կոճի հանում և տեղադրում	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	2000
146	Ինյու կցիոն կոճի հանում և տեղադրում	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	2000
147	Ապակեկացիքի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000
148	Ապակեկացիքի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000	2000
149	Ձեռուցիքի շարժիչի փոխարինում	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	5000
150	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000
151	Դռների էլ/փականի փոխարինում	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	2000
152	Ապակեամբարձիչի փոխարինում	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	1000
153	Ապակեամբարձիչի շարժիչի փոխարինում	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	1000
154	Էլեկտրական տպիչների փոխարինում	2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000
155	Մարտկոցի փոխարինում	1000	1000	1000	1000	1000	1000	1000	1000	1000
156	Մարտկոցի կլեյմանների փոխարինում	1000	1000	1000	1000	1000	1000	1000	1000	1000
157	Զսեսնի բլոկի փոխարինում	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	1000
158	Էլեկտրական շտեյլերի փոխարինում	1000	1000	1000	1000	1000	1000	1000	1000	1000
159	Վառոցքի լարերի խոճի փոխարինում	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000
160	Զրի ցողիչի փոխարինում	1000	1000	1000	1000	1000	1000	1000	1000	1000


10. Ավտոմեքենայի սրահ

26	Շարժիչ յուղ 10/40 կիսասինթետիկ	4500	4500	4500	4500	4500	4500	4500	3000
27	Ապակեմաքրիչի հերոսկ	500	500	500	500	500	500	500	500
3. Սարքեցման և արտաձման համակարգ									
28	Ուղիատոր	100000	100000	100000	100000	100000	100000	100000	
29	Ուղիատորի փոդրակ մերքևի	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000
30	Ուղիատորի փոդրակ վերևի	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000
31	Թերմոստատ	15000	15000	15000	15000	15000	15000	15000	15000
32	Փոկ մեծ	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000
33	Հովացման հերոսկ	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500
34	Խլարարի անուղ (խամուտ)	2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000
35	Վառարակի ռարիատոր	40000	40000	40000	40000	40000	40000	40000	2000
4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ									
36	Կցորդան առանցակալ	20000	20000	20000	20000	20000	20000	20000	
37	ՓՏ-ի յուղ (կիսասինթետիկ 75/90)	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000
38	ԱՓՏ յուղ ATS-U DEXTRON-6, 1/	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000
39	ԱՓՏ-ի յուղի գտիչ	20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000
40	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	25000	25000	25000	25000	25000	25000	25000	
41	Հերմետիկ	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000
5. Առջևի և հետևի կամրջակներ									

87	Օրի գործ	12000	12000	12000	12000	12000	12000	12000	8000
88	Վառքային լարերի խուրջ	25000	25000	25000	25000	25000	25000	25000	15000
89	Ապակեվացիչի շարժիչ	30000	30000	30000	30000	30000	30000	30000	15000
90	Փողրակ ջրի ցորիչի	1000	1000	1000	1000	1000	1000	1000	1000
91	Էլեկտրաամբարձիչի շարժիչ	20000	20000	20000	20000	20000	20000	20000	10000
92	Դիմապակի	40000	40000	40000	40000	40000	40000	40000	
93	Չայելի կողային	50000	50000	50000	50000	50000	50000	50000	
94	Ճուպան բռնակախցիկի	20000	20000	20000	20000	20000	20000	20000	
	Միավոր գների հանրագումար՝ ըստ յուրաքանչյուր ավտոմեքենայի	3,436,500.00	3,436,500.00	3,436,500.00	3,436,500.00	3,436,500.00	3,436,500.00	3,436,500.00	1,191,500.00
	Միավոր գների հանրագումար՝ ընդհանուր								16,080,000.00

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Կարեն Բեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
 ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78
 «Կոնվերս բանկ» ՓԲԸ
 Հ/Հ 1930000358920100
 ՀԱՎՈՐՈՒՄ 00000911



ԿԱՏԱՐՈՂ

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ
 ՀՀ, ք. Երևան, Ռոբիդյանց փ. 31.
 «Արարատրանկ» ԲԲԸ
 Հ/Հ 1510012745550100
 ՀՎՀՔ 055465456



Հավելված
 «19» 04 2021թ. կնքված
 ԵՄ-ԳՀԾՁԲ-2/128-1 ծածկագրով պայմանագրի

Վճարման ժամանակացույց*

ՀՀ դրամ

		Վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ. ըստ ամիսների, այդ թվում*										Գումար (ՀՀ դրամ)			
Հ/Հ	Միջանցիկ ծածկագիրը ըստ ԳՀԱ Դասակարգման	Ծառայության անվանումը	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	IX	XII	
1	50111130	ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություններ	-	-	4500000	4500000	4500000	4500000	4500000	4500000	4500000	4500000	4500000	4500000	4500000

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են անողական կարգով

ՊԱՏԻՐԱՏՈՒ

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
 ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բարսեղյան 78
 «Կոնվերս բանկ» ՓԲԸ
 Հ/Հ 1930000358920100
 Հ/Հ 000000911

տնօրենի ժող. Գ. Ավետիսյան

ԿԱՏԱՐՈՂ

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ
 ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց փ. 31.
 «Արարատբանկ» ԲԲԸ
 Հ/Հ 1510012745550100
 Հ/Հ 0055465456

տնօրենի Գր. Գրիգորյան

Պայմանագրի կողմ

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
 ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

 ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

 ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Պատվիրատուի անունը _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ պայմանագրի կնքման ամիս, ամսաթիվը _____-ին կնքված N _____ պայմանագրի համարը _____ գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____ ամիս, ամսաթիվը _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

 ազգանուն, անուն

 ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

 ազգանուն, անուն

 ստորագրություն

P R O M O T I O N